*Հաստատում եմ*

*Տնօրեն՝ Ա. Տաշչյան*
*31.08.2022թ.*

Digitally signed by TASHCHYAN
ARTUR 2014820899
Date: 2023.04.03 14:35:49 AMT

«Աբովյանի համար 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

*ՏՆՕՐԵՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ*

*2022-2023 ՈՒՍՏԱՐԻ*

Աբովյան, 2022

## ՄԱՍ 1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նպատակն այն ցանկալի արդյունքն է, որ մարդ կամ համակարգ պատկերացնում է, պլանավորում և պարտավորվում հասնել անձնական կամ կազմակերպական ցանկալի վերջնակետի ակնկալվող զարգացման պարագայում: Հաստատության գործունության բոլոր ոլորտների համար համընդհանուր նպատակը մեկն է՝ ազգային և համամարդկային արժեքների վրահիմնված կրթությունը ապագա դպրոցի գլխավոր չափանիշն է:

Հաշվի առնելով դպրոցի գործունեության տարբեր ոլորտների առանձնահատկությունները տվյալ փաստաթղթում կսահմանենք ուսումնական հաստատության յուրաքանչյուր ոլորտի նպատակները և խնդիրները, որպեսզի ուսումնական տարվա պլանավորված աշխատանքների արդյունքում դպրոցը առավելագույնս նախապատրաստենք Հանրակրթական նոր չափորոշչի ներդրման առաջին փուլին:

### 1. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր հիմնարկությունում, առավել ես կրթական հաստատությունում ամենակարևոր դերակատարումն ունեն մարդիկ՝ աշխատակազմի անդամները: Չափազանց կարևոր է բարոյահոգեբանական մթնոլորտը, միջանձնային հարաբերությունները, փոխհարգանքի մթնոլորտը և հնարավորինս հարմարավետ աշխարանքային պայմանների ապահովումը դպրոցում: Աշխատակազմի յուրաքանչյուր անդամ պետք է նպաստի ամեն օր իր աշխատանքով դպրոցի առաքելության իրականացմանը:

Այսպիսով՝ աշխատակազմի գործունեության **նպատակն է**

- Կանոնադրական լիազորությունների իրականացումը
- Բարոյահոգեբանական առողջ և հարմարավետ միջավայրի ստեղծումը
- Կորպորատիվ մշակույթի ձևավորում
- Համագործակցային միջավայրի, փոխադարձ վստահության մթնոլորտի ձևավորումը
- Նախաձեռնողականության դրսևորում
- Մասնագիտական հմտությունների շարունակական բարելավում

Խնդիրներն են՝

1. Համագործակցային մշակույթի ձևավորում
2. Աշխատակազմի մասնագիտական շարունակական զարգացման ռազմավարությունների մշակում
3. Մշտադիտարկման և գնահատման ռազմավարությունների մշակում

### 2.Սովորողներիուսումնառությունևայլգործունեություն

Ժամանակակից և որակյալ կրթությունը պետք է նպատակ հետապնդի ներքոհիշյալ կարողունակությունների ձևավորմանը՝ լեզվական գրագիտություն և կարողունակություն,

սովորել սովորելու կարողունակություն, ինքնաճանաչողական և սոցիալական կարղունակություն, ձողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն, թվային և մեդիա կարողունակություն, մշակութային կարողունակություն, մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն, տնտեսական կարողունակություն: Այսօ կրթական համակարգի նպատակն է ձևավորել այնիսի մարդ և քաղաքացի, ով կունենա համապատասխան գիտելիքներ, հմտություններ, արժեքներ, դիրքորոշում և դրանց հիման վրա կկարողանա տարբեր իրավիճակներում, իրադրություններում արդյունավետ և պատշաճ արձագանքել: Ըստ այդմ սովորողների կրթության ***նպատակներն են՝***

- Գրավոր և բանավոր հաղորդակցական հմտությունների զարգացում մայրենի և մի քանի օտար լեզուներով
- Ընթերցանության խթանում, կարդացած նյութի գիտակցում և դրա վերլուծություն
- Բնագիտամաթեմատիկան գիտելիքների կիրառում առօրյա կյանքում և հարակից առարկաների ուսումնասիրման ժամանակ, բնագիտական առարկաներից ստացված հիմնարար գիտելիքների կիրառում բնության և տիեզերքի օբյեկտների նկարագրության, երևույթների և դրանց փոխադարձ կապերի բացատրության, ֆիզիկական մոդելավորման և խնդիրների լուծման համար
- Մեդիագրագիտության և թվային հմտությունների զարգացում՝ գրագետ մեդիաքաղաքացիների ձևավորում, անհրաժեշտ ժամանակակից թվային գործիքների և ծրագրերի իմացություն, թվային տարածքում ապահով գտնվելու կանոնների, առցանց հաղորդակցության էթիկայի, անձնական տվյալների գաղտնիության կանոնների տիրապետում և կիրառում, յուրաքանչյուր անձի անձնական տարածք (ֆիզիկական և հոգեբանական) ունենալու իրավունքի ու անհրաժեշտության գիտակցում
- Քննադատական, վերլուծական մտածողության զարգացում
- Ստեղծագործական մտածողության զարգացում
- Տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրի, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումների, հայոց և համաշխարհային պատմության իրադարձությունների փոխկապակցվածության վերլուծության կարողություն
- Հայաստանի հիմնախնդիրների մասին պատկերացում և վերլուծական կարողությունների զարգացում
- Ֆինանսական և տնտեսական գրագիտության զարգացում
- Հասարակական համակեցության կանոնների և նորմերի իմացություն, դրանց կարևորության գիտակցում, պատասխանատու և հանրօգուտ վարքագծի ցուցաբերում
- Իրավագիտակից, համայնքի խնդիրների նկատմամբ սրտացավ և համայնքի զարգացման ուղղությամբ նախաձեռնող քաղաքացու ձևավորում
- Աշխարհաճանաչողություն
- ժամանակի արդյունավետ կառավարման հմտությունների զարգացում
- կոնֆլիկտների խաղաղ լուծման տարբեր ձևերի կիրառում, հանդուժողականություն, ապրումակցում
- ինքնաճանաչություն
- Ինքնակրթության խթանում

- Հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն նախագծեր մշակելու և իրականացնելու կարողությունների զարգացում
- Հաղորդակցական և համագործակցային հմտությունների զարգացում
- Սեփական կարծիքի, տեսակետի և դիրքորոշման արտահայտման և հիմնավորման հմտությունների զարգացում
- Քաղաքացիական պաշտպանության և առաջին օգնության հիմունքների իմացություն, արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու հմտությունների տիրապետում

**Խնդիրներն են՝**

- դասավանդման որակի բարելավում
- Գնահատման մեթոդաբանության բարելավում
- Ուսումնական բազայի բարելավում
- Սովորողների նախաձեռնողականության խթանում
- Մասնագիտական կողմնորոշում

## 3. Խորհրդակցական մարմինների գործունեություն

### 1) Կառավարման խորհուրդ

Դպրոցի գործունեությունը թափանցիկ դարձնելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառավարման խորհրդի դերը: Անհրաժեշտ է ընդլայնել դպրոցի խորհրդի գործունեությունը հետևյալ ուղղություններով:

- Նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում
- Կրթության պետական կառավարման մարմնին, լիազորված մարմին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում
- Ճիշտ ֆինանսական պլանավորում, որը կնպաստի դպրոցի ֆինանսական միջոցների առավել նպատակային օգտագործման
- Միջոցներ ձեռնարկել դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման և դրանց արդյունավետ օգտագործման համար:

### 2) Ծնողական խորհուրդ

Ժամանակակից կրթության որակի բարելավման գործընթացում ավելի է մեծացել ծնողական համայնքի մասնակցության մակարդակը: Դպրոց-ծնողական համայնք համագործակցությունը պետք է ստանա նոր բովանդակություն և պետք է հիմնված լինի փոխադարձ վստահության վրա: Ծնողական խորհրդին անհրաժեշտ է հնարավորինս ակտիվ ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում:

Ծնողական խորհրդի դերի բարձրացումը

• Սովորող-ծնող-դպրոց համագործակցության զարգացում

• Ընտանիքում և դպրոցում դաստիարակության հարցում նույնականացված մոտեցման հաստատում

• Ծնողական խորհրդի կապի ամրապնդում դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ

• Հանդիպումների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպում դպրոցի գործունեության վիճակի, հեռանկարային ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերի, ծնողավարության հիմունքների քննարկման համար

• 3) Աշակերտական խորհուրդ

Աշակերտական խորհրդի դերի բարձրացումը

• Բարձրացնել դպրոցի աշակերտական խորհրդի դերը ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքներում

• Խթանել ինքնակրթությունը, նախաձեռնողականությունը

• Ամրապնդել աշակերտ-ուսուցիչ աշակերտ-ծնող, աշակերտ-համայնք համագործակցությունը

Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազա

Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան կրթական միջավայրը պատկերացնել առանց անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի անհնար է: Ուսումնական հաստատության զարգացման մեջ առաջնահերթություններից է ուսումնանյութական բազայի համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին: Այս առումով մեր նպատակներն ու խնդիրներն են՝

1. Ուսումնանյութական բազայի համալրում և արդիականացում
2. Էլեկտրոնային գրատախտակների, պրոյեկտորների ձեռքբերում
3. մեթոդական և դիդակտիկ նյութերի ստեղծում և ձեռք բերում:

Հաղորդակցություն, համագործակցություն

Ուսումնական հաստատությունը պետության և համայնքի մի օղակն է: Հետևաբար ճիշտ հաղորդակցության առկայության պարագայում, ձևավորվում է համագործակցություն: Ուսումնական հաստատության զարգացման կարևորագույն ուղենիշերից մեկը համագործակցության առակայությունն է թե՛ ուսումնական հաստատության ներսում, թե՛ հաստատության և այլ կառույցների միջև: Ընդհանրության և միաբանության զգացումով է պայմանավորված բարեփոխումների գործընթացի արդյունավետությունը: Ըստ այդմ նպատակներն են՝

1. փոխգործակցության միջոցով ուսումնական հաստատության գործունեության արդյունավետության բարձրացում
2. ուսումնական հաստատության ներսում համագործակցային միջավայրի ձևավորում

Խնդիրներն են՝

1. Համագործակցել ՀՀ Կոտայքի մարզպետարանի, Աբովյանի համայնքապետարանի հետ իրականացնելու կրթական ծրագրեր
2. Համագործակցել հասարակական կազմակերպությունների հետ սովորողների շրջանում կամավորության և հասարակական աշխատանքի կարևորության գիտակցումը բարձրացնելու նպատակով
3. Համագործակցել ոստիկանության հետ ՝ կազմակերպելով քննարկումներ և զրույցներ իրավագիտակցության բարձրացման և սովորողների վարքում առկա խնդիրները շտկելու ուղղությամբ
4. Համագործակցել ՀՀ-ում և արտեկրում գործող դպրոցների հետ

## Ֆինանսատնտեսական գործունեություն

Նպատակներն են՝

1. Դպրոցի ֆինանսական ռեսուրսների արդյունավետ տնօրինում
2. Թափանցիկություն և հաշվետվողականություն
3. Ֆինանսավորման լրացուցիչ միջոցների հնարավորությունների ստեղծում
4. Հովանավորների ներգրավում

Խնդիրներն են՝

1. Արդյունավետ կառավարում
2. Մրցութային հիմունքներով պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորման համար օրենքով նախատեսված միջոցառումների ձեռնարկում և իրականացում
3. Դրամաշնորհների մասնակցություն

## 4. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Մանկավարժական համակազմի զարգացում**

| ԽՆԴԻՐ | ՆՊԱՏԱԿ | ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԺԱՄԿԵՏՆԵՐ<br>ԿԱՏԱՐՈՂՆԵՐ |
|---|---|---|---|
| 1.Համագործակցային մշակույթի ձևավորում<br>2.Աշխատակազմի մասնագիտական շարունակական զարգացում<br>4.Կոնֆլիկտներիկ առավարում<br>6.Մշտադիտարկման և գնահատման քաղաքականության մշակում | Կանոնադրական լիազորությունների իրականացում<br>Բարոյահոգեբանական առողջ և հարմարավետ միջավայրի ձևավորում<br>Համագործակցային միջավայրի, փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտի ձևավորում<br>Նախաձեռնողականության խթանում<br>Մասնագիտական հմտությունների շարունակական զարգացում<br>Կադրային ռեզերվի ստեղծում | Առարկայական հանձնախմբերի աշխատանքի արդյունավետ կազմակերպում<br>Փոխադարձ դասալսումների իրականացում<br>Կրթական սեմինարների, վարպետաց դասերի կազմակերպում<br>Դպրոցում վերապատրաստումների իրականացում<br>Մանկավարժական առաջավոր փորձի տարածում<br>Միջդպրոցական մեթոդմիավորումների ստեղծում<br>ՏՀՏ հմտությունների զարգացում<br>Տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող վերապատրաստումներին ուսուցիչների մասնակցություն<br>Ուսուցիչների մոտիվացիայի | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, առարկայական հանձնախմբերի ղեկավարներ, մանկավարժական աշխտողներ, մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ<br><br>Ուսումնական տարվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| | | բարձրացման ուղղությամբ միջոցառումների իրականցում, խրախուսման համակարգերի ներդրում<br>Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտությունների, մենթորության զարգացում<br>կամավոր ատեստավորման, մրցույթների ակտիվ մասնակցություն<br>Ֆինանսատնտեսական արդյունավետ քաղաքականության<br>Ճկուն կադրային քաղաքականություն<br>Ուսուցիչների համագործակցության միջազգային հարթակներում ընդգրկվածություն<br>Սեմինարների կազմակերպում դասղեկների աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղղությամբ<br>Նոր դաստիարակչական համակարգի ներդրում | |

## Աշակերտական համակազմի զարգացում

| ԽՆԴԻՐ | ՆՊԱՏԱԿ | ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԺԱՄԿԵՏՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ |
|---|---|---|---|
| ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ նախաձեռնողակա | ժողովրդավարակ ան,քաղաքացիակ | Աշակերտական խորհրդի գործունեության ճիշտ | Տնօրեն, Տնօրենի |

| | | | |
|---|---|---|---|
| նության խթանում<br><br>Դպրոցի կառավարմանը սովորողների ներգրավվածություն<br><br>Արտադպրոցական դաստիարակության բարելավում սովորողներ ինախասիրություն ներիշրջանակներում<br><br>Մասնագիտական կողմնորոշում<br><br>Սովորողների ինքնավարության բարձրացում | ան հասարակության, հասարակության և պետության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք դրսևորող իրավագիտակից քաղաքացու, պետականության, հայրենասիրության, մարդասիրության ոգով դաստիարակված, բազմամշակութա<br><br>յին միջավայրում իրազգային դիմագիծը պահպանող, այլոց մշակութային նազգայինարժեքներինկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորող, քննադատական, ստեղծագործական, վերլուծական մտածողությամբօժտված,մեղիագրագետ անձի, յուրաքանչյուր երեխայի համակողմանի և ներդաշնակզարգացմանհամար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների, արժեքների նդ | կազմակերպում, օժանդակում, աշակերտների ինքնավարության զարգացում, Աշակերտական խորհրդի դերի մեծացում, Սահմանված կարգով նրանց ակտիվ մասնակցության ապահովում դպրոցի կառավարման գործընթացում<br><br>Աշակերտների խրախուսման համակարգերի ստեղծում<br><br>Առաջադիմության մշտադիտարկման համակարգերի ներդրում<br><br>3-րդօտար լեզվի ներդրում ուսումնական պլան<br><br>Բազմաբովանդակ միջոցառում ներիկազմակերպում<br><br>Ժամանակակից մեթոդների, ՏՀՏ-ների կիրառման շնորհիվ<br><br>աշակերտների՝ուսման նկատմամբ հետաքրքրվածության, մոտիվացիայի մակարդակի բարձրացում,<br><br>Մենթորական գործունեության խթանում<br><br>Ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներիկազմակերպում<br><br>Աշակերտականխորհուրդներ իանդամներիևդպրոցականակտիվիհամարուսուցմանկազմակերպումհետևյալթեմաներով՝ | տեղակալներ, առարկայականի անձնախմբերի ղեկավարներ, Աշակերտական խորհուրդ, Ծնողական խորհուրդ<br><br>Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում<br><br>Սեպտեմբեր 2022<br><br>Սեպտեմբեր- |

| | | | |
|---|---|---|---|
| | իրքորոշման սերմանում ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքին ժամանակակից կրթական պահանջների համատեքստում:<br><br>Աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի ուղղությամբ | Ազատ և անկախ ընտրությունների կազմակերպում<br><br>Սովորողների համայնքում պարբերաբար կրթության որակի բարելավմանն ուղղված հարցումների իրականացում | հոկտեմբեր 2022 |

3. Ուսումնական միջավայրի բարելավում, կրթության որակի բարձրացում

| ԽՆԴԻՐ | ՆՊԱՏԱԿ | ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԺԱՄԿԵՏՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ |
|---|---|---|---|
| Ուսումնանյութական բազայի համապատասխանեցում ժամանակակից պահանջներին<br><br>Անվտանգ, առողջ, ներառական և ժամանակակից միջոցներով ապահովվող պայմանների ստեղծում<br><br>Ուսումնառությա | Ուսումնանյութական բազայի համալրում և արդիականացում<br><br>Մեթոդական և դիդակտիկ նյութերիս տեղծում և ձեռքբերում<br><br>Ուսումնառության և դասավանդման որակի բարձրացում<br><br>Գնահատման մեթոդաբանության բարելավում<br><br>Գործնական և | Խորացնել մանկավարժական աշխատողների ներդպրոցական համագործակությունը<br><br>Բարելավել դպրոցում իրականացվող դաստիարակչական աշխատանքները՝ մշակելով և ներդնելով արդյունավետ մեխանիզմներ՝առաջնորդ վելովուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքով, | Տնօրեն, տնօրենի տեղակալներ, առարկայական հանձնախմբերի ղեկավարներ, Աշակերտական խորհուրդ, Ծնողական խորհուրդ<br><br>Անբողջ ուսումնական տարվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| նհամընդհանուր ձևավորման գաղափարախոսության տարածում և դրագործնական կիրառություն դասապրոցեսում: | փորձարարական դասերի քանակի և որակի բարձրացում, ապահովելով անհրաժեշտ տեխնիկական և այլ միջոցներ<br>Ուսումնական միջոցների համալրում՝ գրատախտակների փոխարինում<br>Համագործակցային ուսումնական միջավայրի ստեղծում<br>Ռազմահայրենասիրականդաստիարակությանդրվածքի բարելավում<br>Ճանաչողական և նպատակային էքսկուրսիաների, արշավների կազմակերպում | աշակերտակենտրոն մոտեցմամբ<br>Մեծացնել<br>Աշակերտների ինքնավարություն նու նախաձեռնողականությունը, նախագծային և հետազոտական աշխատանքների իրականացման համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ<br>Ուսուցիչ-ծնող-աշակերտ եռակողմ քննարկումների կազմակերպում<br>Ուսումնանյութականբազ անհամապատասխանեցն ելժամանակակիցկրթակա նպահանջներին<br>Դասղեկականժամերիթեմ ատիկայի, դաստիարակչականմիջոց առումներիպլանինպատա կայինկազմում՝ելնելովսով որողներիտարիքայինառ անձնահատկություններից (համագործակցության, ստեղծագործականության , քննադատական մտածողության խթանում, տարբեր կարողություններով սովորողների ներուժի վերհանումևխրախուսում, արժեհամակարգի ձևավորում, մասնագիտական կողմնորոշում, համայնքային | |

| | | | |
|---|---|---|---|
| | | հիմնախնդիրների վերհանում, մեդիագրագիտության խթանում | |

## 4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

| ԽՆԴԻՐ | ՆՊԱՏԱԿ | ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԺԱՄԿԵՏՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ |
|---|---|---|---|
| Ներդպրոցական համագործակցո ւթյան խթանում<br><br>Համագործակցո ւթյանխթանում դպրոցի նայլ կառույցների | Փոխգործակցությ անմիջոցով ուսումնական հաստատության գործունեության արդյունավետութ յան բարձրացում<br><br>Ուսումնական | Համագործակցել ՀՀ Կոտայքի մարզպետարանի, Աբովյանի համայնքապետարանի հետ<br><br>Համագործակցել տարբեր հասարակական կազմակերպությունների հետ<br><br>Համագործակցել ոստիկանության, ԱԻՆ-ի հետ | Տնօրեն, տնօրենի տեղակալներ,<br><br>ծնողական խորհուրդ,<br><br>առարկայական մեթոդական միավորումներ, մանկավարժակա |

| | | | |
|---|---|---|---|
| միջև<br><br>Խորհրդակցական մարմինների հետ համագործակցության խթանում, աշխատանքների արդյունավետության բարձրացում | հաստատության խնդիրների լուծում արտաքին կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում<br><br>Դպրոցում համագործակցային միջավայրի ստեղծում | ՝ կազմակերպելով քննարկումներ և զրույցներ իրավագիտակցության բարձրացման, անվտանգ կենսարծունեության ուղղությամբ<br><br>Համագործակցել ՀՀ-ում և արտեկրում գործող դպրոցների հետ<br><br>Միջդպրոցական մեթոդական միավորումների ստեղծում<br><br>Համագործակցել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, բուհերի, տարբեր գործունեություն իրականացնող կազմակերպությունների, սովորողների մասնագիտական կողմնորոշման միջոցառումների կազմակերպման համար<br><br>Ուսուցիչներին, աշակերտներին համագործակցության միջազգային հարթակներում ընդգրկման խրախուսում<br><br>Ուսումնական հաստատության ներսում համագործակցության խթանում՝ ինտեգրված դասերի կազմակերպում,<br><br>Համագործակցել համայնքի առողջապահական կազմակերպությունների հետ հիվանդությունների կանխարգելման իրազեկման արշավների իրականացման | ն խորհուրդ, մանկավարժական աշխատողներ, աշակերտական խորհուրդ, կառավարման խորհուրդ |

| | | | |
|---|---|---|---|
| | | համար<br><br>Համագործակցել տարբեր լրատվամիջոցների հետ աշակերտների մեգ մեդիագրագիտության ձնավորման նպատակով, ստեղծել դպրոցի մեդիա-ռեսուրսներ՝ հեռուստաալիք և ռադիոկայան<br><br>Կազմակերպել և իրականացնել<br>- մասնագիտական կողմնորոշման սեմինարներ և հանդիպումներ դպրոցում<br>- տեսաֆիլմերի դիտում և քննարկում մասնագիտական կողմնորոշման մասնագետի հետ,<br>- էքսկուրսիաներ ձեռնարկություններ, հիմնարկություններ և ուսումնական հաստատություններ<br><br>Կազմակերպել ծնողների համար սեմինարներ, քննարկումներ, զրույցներ Մշակել և կազմակերպել գործողությունների պլան արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման համար | |

## 5. Ֆինանսատնտեսական գործունեություն

| ԽՆԴԻՐ | ՆՊԱՏԱԿ | ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԺԱՄԿԵՏՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ |
| --- | --- | --- | --- |
| 1.Գրագետ ֆինանսական քաղաքականության իրականացում<br>2.Մրցույթային հիմունքներով պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորման համար օրենքով նախատեսված միջոցառումների ձեռնարկում և իրականացում<br>3.Դրամաշնորհ ներիմասնակցություն | Դպրոցի ֆինանսական միջոցների արդյունավետ և խնայողական տնօրինում<br>2.Թափանցիկություն և հաշվետվողականություն<br>3.Ֆինանսավորման լրացուցիչ միջոցների հնարավորությունների ստեղծում<br>4.Հովանավորների ներգրավում | | |

*ՄԱՍ 2. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ*

## ԲԱԺԻՆ 1. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| N | Աշխատանքիբովանդակությունը | Կատարմանժամկետը | Պատաս-խանատու | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5* |
| 1. | Ելնելով շենքային պայմաններից ուսումնական պարապմունքները կազմակերպել երկու հերթով: | Ուստարվար նթացքում | Տնօրեն | |
| 2. | Կոմպլեկտավորելհետևյալդասարանները<br>***ա/ կրտսերդպրոց  բ/ հիմնականդպրոց***<br>I դաս.– 6<br>II դաս. – 6<br>III դաս. – 6<br>IV դաս.- 5<br>V դաս. - 5<br>VI դաս. - 5<br>VII դաս. - 5<br>VIII դաս. - 5<br>IX դաս.- 5 | Սեպտեմբեր | Տնօրեն | |
| 3. | Նշանակել դասղեկներ և դասվարներ | Օգոստոս | Տնօրեն | |
| 4. | Նշանակել ուսումնական կաբինետների վարիչներ | Օգոստոս | Տնօրեն | |
| 5. | Նշանակել և մանկավարժական խորհրդին ներկայացնել առարկայական մասնախմբերի ղեկավարներին | 20.08-31.08 | Տնօրեն, մանկ. խորհուրդ | |
| 6. | Նշանակել և հրամանագրել դասղեկներ, արտադասարանական խմբակների ղեկավարներ | Օգոստոս | Տնօրեն | |
| 7. | Ուսումնական մասնաշենքի յուրաքանչյուր հարկում, բակում, կազմակերպել ամենօրյա հերթապահություն | Մշտապես | Տնօրեն, տնօրենի՝ ՄԿԱ գծովտեղակ ալ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8. | Նշանակել հերթապահներ, պահանջել հերթապահներից՝ <br>• Հսկել և իրականացնել օրվա հերթապահությունը ուսումնական մասնաշենքում <br>• Կազմակերպել տվյալ օրվա ուսումնական ողջ գործընթացը | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9. | Ճշտել սոցիալապես անապահով, ծնողազուրկ երեխաների ցուցակը և հնարավորության սահմաններում ապահովել անվճար դասագրքերով: | | տնօրենի՝ ՄԿԱ գծովտեղակալղասղեկ, ծնողխորհրդինախագահ | |
| 10. | Դպրոցական շենքը նախապատրաստել նոր ուսումնական տարվան: | 27.08-31.08 | տնտեսվար | |

## ԲԱԺԻՆ Բ. ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՈՎ

ՆԵՐՍՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻՆ

## *ԳԼՈՒԽ Գ. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆԸ*

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻՆ*

## *ԳԼՈՒԽ Դ. ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ*

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻՆ*

## ՄԱՍ 5. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

| *Հ/Հ* | *Գործունեության տեսակ, պլանավորում* | *Պատասխանատուն* | *Կատարման ժամկետ* |
|---|---|---|---|
| 1. | Դպրոցում ԾԽ ժողովների կազմակերպում | ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ, ծնողներ,աշակերտներ | Ըստ ժամանակացույցի |
| 2. | Ստեղծել դպրոցի ԾԽ-ի կազմը և հաստատել<br>Ապահովել դպրոցի և սովորողի ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը:<br>Կազմակերպել համադպրոցական, դասարանական ծնողական ժողովներ,նիստեր, հավաքներ: | Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ, ծնողներ,աշակերտներ | Սեպտեմբեր<br>Ուս.տարվա ընթացքում |
| 3. | Ապահովել ծնողների ներգրավումը սովորողների արտադպրոցական և արտադասարանական, ներդպրոցական միջոցառումներին՝ համաձայն միջոցառումների պլանի: | ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ | Ուս. տարվա ընթացքում |
| 4. | Կազմակերպել սեմինարներ, քննարկումներ, զրույցներ հետևյալ թեմաներով ՝<br>• <<Երեխայի հոգեֆիզիոլոգիական զարգացման առանձնահատկությունները տարիքային հոգեբանության համատեքստում>><br>• <<Դաստիարակության մեթոդները տանը և դպրոցում>><br>• <<Ինչ է պատիժը և խրախուսումը: Պատժի և խրախուսման տեսակները>> | ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ, ծնողական խորհուրդ | Ուս. տարվա ընթացքում |
| 6. | Մշակել և կազմակերպել գործողությունների պլան | ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, | Ուս. տարվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| | արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման համար | դասղեկներ, ծնողական խորհուրդ | |

## ՄԱՍ 6. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1. | Կազմել տարիֆիկացիոն ցուցակը: | սեպտեմբեր | Տնօրեն |
| 2. | Կազմել ծախսերի նախահաշիվ, քննարկել դպրոցի խորհրդում և ներկայացնել մարզպետարանի ֆինանսական վարչություն: | Ուստարվա ընթացքում | Հաշվապահ, կառավարման խորհուրդ |
| 3. | Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսումնական տեխնիկական միջոցների, դիդակտիկ պարագաների և այլ նյութերի օգտագործման և պահպանման ուղղությամբ: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն, տնտեսվար |
| 5. | Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքիու սարքավորումների հաշվառում: | Նոյեմբեր | Տնօրեն, հաշվապահ, տնտեսվար |
| 6. | Ապահովել շենքի ջերմային, լուսային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն, տնտեսվար |
| 7. | Մարզային համապատասխան բաժանմունք ներկայացնել բանկային գործառնությունների իրականացման համար վճարային փաստաթղթերն ստորագրելու իրավունք ունեցող անձանց ստորագրությունների նմուշները: | Սահմանված ժամկետում | Տնօրեն, հաշվապահ |
| 8. | Հետևել դպրոցի ջեռուցման ներքին ցանցի անխափան աշխատանքին: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն, տնտեսվար |

«Աբովյանի համար 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

**ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՕՐԱՑՈՒՅՑ - 2023**

**ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**

| |
|---|
| Բյուջեի պլանավորում, նախագծի կազմում, հաստատում |
| Բյուջեի կատարում և վերահսկողություն |
| Բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության կազմում և հաստատում |

**Բյուջետային օրացույց**

| | |
|---|---|
| ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՈՒՄ | սեպտեմբերի 1-20-ը |
| ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ | սեպտեմբերի 21-ից մինչև նոյեմբերի 15-ը |
| ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆԸ և ՊԵՏԱԿԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ | նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը |
| ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ | մինչև մարտի 15-ը |

## ՄԱՍ 7. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՄՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ | ՆՊԱՏԱԿԸ | ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ | ԲՅՈՒՋԵՆ |
|---|---|---|---|---|
| Դպրոցի լիցենզիայով սահմանված սովորողների համակազմի սահմանային տեղերի փոփոխություն | Սովորողների համակազմի աճ, ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված ՀՀ-ում բնակություն հաստատած սովորողների կրթության շարունակականության ապահովում | ԿԳՄՍ նախարարության լիցենզավորման բաժին գրության հասցեագրում, սովորողների համակազմի սահմանային տեղերի ավելացում | օգոստոս | Նոր դասարանի կոմպլեկտավորում |
| ՏՀՏ դասերի իրականացման համար արդյունավետ ուսումնական միջավայրի ստեղծում | ՏՀՏ դասերի իրականացում | Նոր պրոյեկտորի, խելացի գրատախտկների ձեռքբերում | Ուստարվա ընթացքում | |
| Ժամանակակից ուսումնական միջավայրի ստեղծում | Ուսումնական միջավայրի արդիականացում | Մարկերային և ֆլիպչարտ գրատախտակների ձեռքբերում | Սեպտեմբեր-հոկտեմբեր Ապրիլ-մայիս | |
| Դպրոցի մասնաշենքերի ձևավորում | Ուսումնական միջավայրի հարմարավետություն | Դպրոցի մասնաշենքերի ձևավորում համապատասխան առարկայական ծրագրերի բովանդակության | Ուստարվա ընթացքում | |
| Խմբակների ներդրում | Սովորողների նախասիրությունների շրջանակում | Էկո ակումբ խմբակի ծրագրի ստեղծում և ներկայացում | օգոստոս | Խմբակի ժամերի տարիֆիկացում՝ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կրթական ծրագրերի ներդրում, բնապահպանական դաստիարակության ձևավորում | ԿԳՄՍ նախարարության երաշխավորությանը | | շաբաթական երկու դասաժամ |
| 3-րդ օտար լեզվի ներդրում | Սովորողների նախասիրությունների շրջանակում կրթական ծրագրերի ներդրում, | Պարսկերենի՝ որպես երրորդ օտար լեզվի ներդրում | սեպտեմբեր | Առանց ֆինանսական միջոցների |
| Մանկավարժամեթոդական վերապատրաստումների իրականացում | Ուսուցիչների մասնագիտական հմտությունների կատարելագործում Հանրակրթության նոր չափորոշչի ներդրմանն ընդառաջ | Ուսուցիչների մասնագիտական հմտությունների կատարելագործում | մ/մ նիստեր | Առանց ֆինանսական միջոցների |
| Մեթոդական միավորումների աշխատանքի արդյունավետության բարձրացում | Մեթոդական միավորումների աշխատանքի արդյունավետության բարձրացում | Ներդպրոցական համագործակցության խթանում, մեթոդական զեկուցումների իրականացում, առաջավոր փորձի փոխանակում | մ/մ նիստեր | Առանց ֆինանսական միջոցների |
| Միջդպրոցական մեթոդական միավորման ստեղծում | Համայնքի դպրոցների հետ համագործակցություն | Միջդպրոցական մեթոդական միավորման ստեղծում | Ուստարվա ընթացքում | Առանց ֆինանսական միջոցների |
| Ծնողական ժողովների անցկացում՝ ծնողավարության հիմունքների ինտեգրմամբ | Դաստիարակության մեթոդների և հնարների նույնականացում, դպրոց-ծնող համագործակցության ամրապնդում | Ծնողական ժողովների անցկացում՝ ծնողավարության հիմունքների ինտեգրմամբ | Ծնողական ժողովներ | Առանց ֆինանսական միջոցների |
| Առաջադիմության մշտադիտարկմ | Առաջադիմության բարձրացում | Աշակերտի ընթացագրերի տրամադրում | Նոյեմբեր, հունվար, ապրիլ, հունիս | Առանց ֆինանսական միջոցների |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ան մեխանիզմների ներդրում | | ծնողներին | | |
| Մանկավարժնե րի խրախուսում «Տարվա լավագույնները» մրցույթին, կամավոր ատեստավորմա նը մասնակցելուն | Մանկավարժներ ի խրախուսման համակարգերի ներդրում | Մեթոդական և մանկավարժական օժանդակության տրամադրում | Ըստ մրցույթի և կամավորման ժամանակացույցո վ սահմանված ժամանակահատվ ածի նախապատրաստ ական փուլում | Առանց ֆինանսական միջոցների |
| Մանկավարժնե րի խրախուսում վերապատրաստ ման սեմինարների մասնակցելուն | Ուսուցիչների մասնագիտական հմտությունների կատարելագործո ւմ | Վերապատրաստու մների մասին տեղեկատվության փոխանցում և իրազեկում | Ըստ վերապատրաստու մների ժամանակացույցի | Առանց ֆինանսական միջոցների |
| Ներառական կրթության իրականացման արդյունավետութ յան բարձրացում | Ներառական կրթության իրականացման արդյունավետութ յան բարձրացում | ԱՈՒՊ-ների ճիշտ մշակում | պարբերաբար | Առանց ֆինանսական միջոցների |
| Մասնագիտակա ն կողմնորոշման սեմինարների իրականացում՝ այդ թվում ծնողական խորհրդի ներգրավմամբ | Մասնագիտակա ն կողմնորոշում | Մասնագիտական կողմնորոշման սեմինարների իրականացում՝ այդ թվում ծնողական խորհրդի ներգրավմամբ | պարբերաբար | Առանց ֆինանսական միջոցների |
| Գնդակների ձեռքբերում | Ֆիզկուլտուրայի դասերի իրականացում | Գնդակների ձեռքբերում | Օգոստոս-սեպտեմբեր | |
| Բացօթյա դասասենյակի ստեղծում | Դպրոցի միջավայրի արդյունավետ օգտագործում | Բացօթյա դասասենյակի ստեղծում | Մարտ-ապրիլ | Առնց ֆինանսական միջոցների |
| Ուսումնաօժանդ ակ օղակի աշխատակիցնե րի աշխատավարձի բարձրացում | Ուսուցիչների խրախուսում | Դրույքաչափի բարձրացում | հունվար | Ըստ Կառավարմա ն խորհրդի որոշման |
| Մեդիագրագիտո | Մեդիագրագիտու | Մեդիագրագիտութ | նոյեմբեր | Առանց |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ւթ<br>յան խթանում | թյան հմտությունների ուսուցանում | յան շաբաթ | | ֆինանսական ռեսուրսների |
| Համագործակցություն | Համագործակցության խթանում | Հայաստանի դպրոցներ, քոլեջներ, արտասահմանյան դպրոցներ, հասարակական կազմակերպություններ, մշակութային կազմակերպություններ | պարբերաբար | Առանց ֆինանսական ռեսուրսների |

ՍՈւՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԵԼ Է 31.08.2022Թ. ԿԱՅԱՑԱԾ 2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏՈՒՄ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. Տաշչյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Չթչյան